https://doi.org/10.46991/hc.2023.20.2.131

The Ways to Explore and Include the Potential of the Armenian Diaspora

Ruben Karapetyan
https://orcid.org/0000-0002-9609-4413
PhD, Head Department of Diaspora Studies, IAE NAS
karapetyan.ruben.s@gmail.com

Key words: potential, integration, diaspora, dispersed groups, discrete groups, community, ethno-social resources, resource analysis.

The article discusses ways to clarify the purposes of the study of the Armenian Diaspora, as well as methodological approaches to identifying and studying the potential of the Diaspora.

By improving their professional skills in the international arena and gaining significant economic, social and political weight, Diaspora Armenians have the potential to establish international structures on a national basis that can become a platform for political, economic, social and cultural cooperation. Collecting and analyzing information about the situation in each part of the diaspora will make it possible to identify and assess opportunities and prospects for developing and implementing community and national programs.

Հայկական սփյուռքի ներուժի ուսումնասիրման և ներառման ուղիները

Ռուբեն Կարապետյան
պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի վարիչ

Հիմնաբառեր՝ ներուժ, ինտեգրում, սփյուռք, դիսպերս խմբեր, դիսկրետ խմբեր, համայնք, էթնոսոցիալական ռեսուրսներ, ռեսուրսների վերլուծություն:

Հոդվածում քննարկվում են հայկական սփյուռքի ուսումնասիրության նպատակների հստակեցման ուղիները, ինչպես նաև սփյուռքի ներուժի բացահայտման և ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցումները:

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 131-139.
Received: 15.07.2023
Revised: 02.08.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Միջազգային ասպարեզում կատարելագործելով իրենց մասնագիտական հմտությունները և ձեռք բերելով զգալի տնտեսական, սոցիալական և քաղաքական կշիռ՝ սփյուռքահայերը ներուժ ունեն ազգային հիմքի վրա ստեղծել միջազգային կառույցներ, որոնք կարող են դառնալ կարևոր հարթակներ համագործակցության համար: Սփյուռքի յուրաքանչյուր հատվածում տիրող իրավիճակի մասին տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը հնարավություն է ընձեռում բացահայտել և գնահատել համայնքային և համազգային ծրագրերի մշակման և իրականացման հնարավորությունները ու հեռանկարները:

Пути изучения и включения потенциала армянской диаспоры

Рубен Карапетян
Д.и.н., Заведующий отделом исследований диаспор, ИАЭ НАН

Ключевые слова: потенциал, интеграция, диаспора, дисперсные группы, дискретные группы, община, этносоциальные ресурсы, анализ ресурсов.

В статье рассматриваются пути уточнения целей изучения армянской диаспоры, а также методологические подходы к выявлению и изучению потенциала диаспоры.

Обогащая свои профессиональные способности на международной арене и приобретая значительный экономический, социальный и политический вес, армяне Диаспоры имеют все возможности для формирования международных структур на национальной основе, которые могут стать важными платформами для сотрудничества. Сбор и анализ информации о ситуации в каждой части диаспоры даст возможность выявить и оценить возможности, перспективы разработки и реализации общинных и общенациональных программ.

* * *

Ներածություն: Ժամանակակից համաշխարհային գործընթացներում առանձնակի տեղ է զբաղեցնում մեծ թափ ստացած բնակչության ծավալուն տեղաշարժերը: Դրանց հետևանքով խորացվում է ընդունող երկրների էթնիկ, դավանանքային մշակութային բազմազանությունը, դրանով իսկ նոր լիցք հաղորդում բնակչության տարբեր շերտերի միջև ինտեգրման հակասական գործընթացներին և փոխակերպում երկրների դիմագիծը: Այս ամենը տեղի են ունենում համաշխարհային երկու հակադիր գոյապայքարների խորապատկերի վրա՝ գլոբալացման ընթացքով և պետությունների սեփական ինքնիշխանության պահպանման ձգտումով: Ինչպես նշում է հայտնի ֆրանսիացի գիտնական, սոցիոլոգիայի և իրավունքի բնագավառներում հետազոտությունների Կոմիտեյի փոխ-նախագահ Ա.Ժ.Առնոն «ամեն ինչ կարող էր լինել չափազանց հեշտ, եթե գլոբալի զարգացումը ազգայինի հետ պայքարում չհանգեցներ տեղականի հակադրման զարգացմանը» (Arnaud, 1998, 36):

Ընդունող երկրի կենսական ոլորտներում ներգրավված և դրա շնորհիվ տարբեր (էթնիկ, դավանանքային, ռասայական և այլ) հենքի վրա ձևավորված սփյուռքերը մասնակից են դառնում

այդ երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային գործընթացին, ազդում նրա ներքին և արտաքին քաղաքականության վրա: Սա բացատրվում է նրանով, նշում է Ռ.Կոհենը, որ միջազգային համակարգի պայմանակորեն «ուղղահայաց» հարթությունում մնում են պետությունները, բայց «հորիզոնական» (տրանսազգային) հարթությունում գերիշխում են ավելի շարժունակ և միաձույլ սուբյեկտներ, որոնց պետությունները չեն կարող դիմակայել, քանի որ հուզական կապերը լրացուցիչ արդյունավետություն և գրավչություն են ապահովում անդրազգային փոխգործակցության համար (Cohen, 1996, 517-518):

Այս պարագայում կարևոր դեր ունի ամեն մի նման հանրության վերարտադրման հնարավորությունները, սեփական և էթնիկ հայրենիքի շահերի պաշտպանման և իրենց վերաբերվող խնդիրների լուծման համար ռեսուրսների համախմբան ունակությունը: Այսօր՝ մի շարք սփյուռքեր լինելով կուռ կազմավորված, լուրջ ներուժ են պարունակում իրենց ազդեցության, թե՛ շրջանակների լայնությամբ, թե՛ խորությամբ (Vertovec S., The Political Importance of Diasporas): Գոյություն ունեն նաև սփյուռքեր որոնց ազդեցության ներուժը գտնվում է սաղմ վիճակում, կամ ուղված է ինտեգրման խնդիրների լուծմանը: Բայց պարզ է մի բան, որ ամեն մի սփյուռքյան հանրություն տարբեր աստիճանի ներուժ է պարունակում, որը ըստ ժամանակի պահանջներին կարող է ներառվի տվյալ հանրության տարբեր հեռահար և մոտակա խնդիրների դրման և լուծման համար[1]:

Այս տեսակետից օտարազգի միջավայրում կենսագործող ամեն մի էթնիկ խմբի ներուժի գնահատումը կարևորվում է միջազգային ատյանների, պետական, քաղաքական գործիչների ու փորձագետների կողմից: Նշված շրջանակները անհրաժեշտ են համարում սփյուռքերի ձևավորման, նրանց մեջ ընթացող գործընթացների, տվյալ երկրի կենսագործունեության վրա ազդելու լծակների մասին ճշգրիտ գիտելիքներ ստանալը: Առաջանում է պահանջ պատկերացում ստանալ առանձին սփյուռքերի ներուժի բացահայտման, ուսումնասիրման և ներառման ուղիները մասին: Պատկերացում կա նաև, որ նշված խնդրի լուծման համար անհրաժեշտ է դիմել սփյուռք հանրության բազմաբովանդակ հատկանիշների, և՛ առանձնակի, և՛ համակցված ձևով ներկայացչական, այսինքն իրականին մոտ, համակողմանի էմպիրիկ ուսումնասիրություններին: Դրանք պետք է վերաբերվեն ամբողջ սփյուռքի և նրա առանձին հատվածների ձևավորման աղբյուրների, միջավայրին, նրանց ինտեգրման գործընթաներին առանձնակի հանրության դիմագծով պահպանման և վերարտադրման ձևերի մասին գիտելիքների հավաքագրմանը:

Այստեղ բազմակի հետազոտական փորձ է կուտակված ինչպես առանձնակի խմբերի մոտ կատարվող գործընթացների շուրջ, այնպես էլ դրանց բացատրելու տարբեր տեսությունների ու էմպիրիկ հետազոտությունների մեթոդաբանական հնարքների կիրառման և գործիքակազմի ընդգրկման միջոցով: Նշվածի համատեքստում հատուկ նշանակություն է ստանում մեկ էթնիկ հանրության, մեր դեպքում հայ էթնոսի հենքի վրա, ձևավորված սփյուռքի ներուժի ուսումնասիրության և կիռարման փորձի իմաստավորման խնդիրը: Վերջինիս լուծման ճանապարհին անհրաժեշտ է ապահովել երկու միմյանց լրացնող մոտեցումներ՝ առաջինը կոչված

[1] Ազգային պետություն ունեցող և չունեցող սփյուռքերը հասկանալի է որ ունեն տարբեր խնդիրներ և դրանցից բխող նպատակների առաջնահերթությունները: Այսպես քրդական և թուրքական սփյուռքերը լրջորեն տարբերվում են իրարից. Եթե առաջինի մոտ առաջնահերդ խնդիրներում տեղ է զբաղեցնում ազգային տարածքում պետականության հասնելու, ապա երկրորդը ավելի շատ նպատակադրված է ինտեգրման, Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման:

է հստակեցնել սփյուռքի հետազոտական շրջանակները, երկրորդը՝ ապահովել դրանց իրականացման մեթոդաբանական հենքը:

Հայկական սփյուռքի ուսումնասիրման նպատակների հստակեցման ուղին: Աշխարհասփյուռ հայ ազգի զգալի մասի ստեղծագործական ներուժը զարգանում է արդի համաշխարհային միտումներին համընթաց: Ներգրավված լինելով միջազգային տնտեսական և աշխատանքային շուկայում, դրա շնորհիվ հարստացնելով իրենց մասնագիտական ունակություններն ու առաջատար տեխնոլոգիաների իմացությունը, բնակության երկրներում ձեռք բերելով զգալի տնտեսական, սոցիալական և քաղաքական կշիռ՝ սփյուռքահայերն ունեն բոլոր հնարավորություններն ազգային հենքի վրա ձևավորելու միջազգային այնպիսի կառույցներ, որոնք ընդունակ են դառնալ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային համագործակցության հիմնարար հարթակներ: Դրան կարող է նպաստել Հայկական երեք հանրապետությունների օրոք ձևավորված պետական ինքնակառավարման քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կենսագործունեության և միջպետական հարաբերությունների, ինչպես նաև ավանդական գաղթօջախների ինքնակազմակերպման մեծ փորձը: Անժխտելի է այն փաստը, որ հայկական սփյուռքի տարբեր հատվածները անցել են ինքնակազմակերպման և էթնիկ նկարագրի պահպանման պատմական ուղի: Ներկայումս սփյուռքում գործում են համայնքային և համազգային բազմաթիվ կառույցներ ազգային ինքնության պահպանման գործառույթներով, ընդգրկված են Հայ Դատի պաշտպանության, լոբբինգի և հայրենիքի հետ համագործակցության գործընթացներում (Հայ էթնիկությունը սփյուռքում, 2021, 252):

Մինչդեռ ներկա հայկական երկու հանրապետությունների և ավանդական սփյուռքի տնտեսական, քաղաքական և սոցիալական հնարավորությունների առկայության պայմաններում, տեղի է ունենում ազգի հավաքական ներուժի շարունակական նվազում (Российские армяне. Этносоциологическое исследование, 2016, 80): Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ տեղային և համազգային խնդիրների լուծման համար անհրաժեշտ ռեսուրսներ հավաքագրելու ունակ խոշոր ու կազմակերպված համայնքերը, Հայաստանն ու Արցախը այսօր կրում են լուրջ քանակական և որակական կորուստներ: Դա պայմանավորված է էթնոսում ընթացող զանգվածային տեղաշարժերով, որոնք հանգեցնում են հայերի տարաբնակեցման քարտեզի լուրջ փոխակերպմանը և դրա հետևանքով ուծացման գործընթացների արագացմանը: Այսպես, Սպիտակի երկրաշարժը, Ղարաբաղյան պատերազմները և շրջափակումը, էներգետիկ և տնտեսական ճգնաժամը, ԽՍՀՄ-ի փլուզումը առաջացրեց՝ ՀՀ, Արցախի, Ադրբեջանի, Վրաստանի, ՌԴ Հյուսիսային Կովկասի, Միջինասիական հանրապետությունների հայերի ավանդական բնակեցման տարածքներից զանգվածային արտագաղթը դեպի ՌԴ-ի, Ուկրաինայի, եվրոպական տարբեր երկրների, ԱՄՆ-ի և Կանադայի քաղաքները: Նմանատիպ գործընթացներ արձանագրվեցին նաև հայ ավանդական գաղթավայրերում: Վերջին 40-50 տարիների իրադրությունը Լիբանանում (Տագէսեան, 2015), Կիպրոսի զգալի տարածքի զավթումը թուրքական բանակի կողմից[1], քաղաքացիական պատերազմը Սիրիայում[1], ամերիկյան ներխուժումը Իրաք[2] և

[1]1974 թվականին Թուրքիան ներխուժեց Կիպրոսի տարածք և գրավեց կղզու 1/3 մասը:

տնտեսական ճգնաժամը Իրանում[3] խթանեցին այդ կազմակերպված ավանդական գաղթօջախներից հայերի արտագաղթը ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և այլ եվրոպական երկրներ (Karapetyan, 2022, 14): Այս ամենի հետևանքով հայ էթնոսի գերակշռող մասը կորցրեց իր էթնոտարածական հոծ արեալները և դիրսպերս խմբերի տեսքով սփռվեց աշխարհի զարգացած երկրների քաղաքներում: Դրանց տարածքում առաջացավ նոր որակի գաղթօջախներ, որոնք իր էությամբ բազմաշերտ են, կազմված լինելով բնիկների և տարբեր երկրներից եկած միգրացիոն խմբերից: Այս խորապատկերի վրա որոշ քաղաքներում, ինչպես օրինակ Փարիզում, Մարսելում, Լիոնում, Լոս-Անջելեսում և այլ քաղաքներում ձևավորվել են հայերի տարածական փոքր դիսկրետ խմբեր:

Նշված բազմաշերտությունը դիսպերս և դիսկրետ բնակեցման պայմաններում չի նպաստում այդ խմբերի իրար մեջ մերձեցմանը, քանի որ ամեն մի շերտ ենթամշակութային և սոցիալական առումով առանձնահատուկ է: 2012-2021 թթ. հետազոտությունները, որոնք իրականացվել են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի աշխատակիցների կողմից Թեհրանի, Բեյրութի, Լոս Անջելեսի, Փարիզի, Լիոնի, Կիպրոսի, Թբիլիսիի, Կիևի հայերի շրջանում, որոշակի պարզաբանում են տալիս ներկայիս գաղթօջախների կազմի և դրանց հետևանքով առաջացած գործընթացների մասին: Այսպես Լոս-Անջելեսի հայերի ծագումնաբանական կազմը բացի նախորդ շրջաններում գաղթածներից և նրանց շառավիղներից, ներկայացված է ՌԴ, ՀՀ, Վրաստանից, Ադրբեջանից, Մերձավոր Արևելքից և Իրանից, Եվրոպական երկրներից և Հարավային Ամերիկայից տարբեր ժամանակներում եկած խմբերով: Ամեն երկրից եկած խումբը առանձնակի է իր սոցիալական կազմով, մշակութային որոշակի տարրերով, վարքագծով և ինքնակազմակերպման առումով (Կարապետյան, 2018, 171-205): Այն իրավիճակը, որ ամեն մի խումբը գտնվում է տարբեր կացության մեջ, որը պայմանավորված է նրա կազմով, ելքի երկրում ձեռք բերած սոցիալ-մշակութային ռեսուրսով և վերջապես ներգաղթի շրջանում ունեցած իր հատկանիշներով, առաջացնում է լուրջ խոչնդոտներ միմիանց հետ մերձեցմանը և համախմբմանը (Կարապետյան, 2013, 33-73): Մինչդեռ ելքի վայրերում խախտվում է ձևավորված սոցիալ-ժողովրդական կազմը, հոծ տիպի տարաբնակեցումը ձևափոխվում դիսկրետի, թուլանում են միջհամայնքային կապերը, գործող կառույցների մոտ նեղանում են գործառույթների շրջանակները:

Այսպիսով նշված քանակական և դրանից բխող որակական կորուստները, հետևանք են ազգի մոտ ընթացող ու ժամանակի մեջ արագացող գործընթացների, որոնք առաջացնում են էթնիկ վերարտադրման և պահպանման բազմաթիվ հիմնախնդիրներ և Հայաստանի և հատկապես հայկական սփյուռքի բոլոր հատվածների համար: Այս արագ փոփոխվող իրավիճակներում հայկական սփյուռքի գերակշռող մասը ներկայացված է բազմաթիվ դիսպերս և մասսամբ դիսկրետ խմբերով, որոնց տարածական ցրվածությունը աննախադեպ է: Հետևապես, այս իրավիճակներում ընթացող սփյուռքահայերի ինտեգրման, էթնոմշակութային արժեքների պահպանման, իրար

---

[1] Սիրիայում քաղաքացիական պատերազմը սկսվել է 2011թ-ի գարնանը:

[2] 2003 թվականին Միացյալ Նահանգների գլխավորած կոալիցիան ներխուժեց Իրաք և տապալեց Սադդամ Հուսեյնի կառավարությունը:

[3] ԱՄՆ-ն առաջին անգամ Իրանի դեմ պատժամիջոցներ կիրառեց 1979թ.: Հետագայում պատժամիջոցներ կիրառեցին նաև ԵՄ-ն, Կանադան, Ավստրալիան, Ճապոնիան, և այլն: Իրանի դեմ պատժամիջոցներն արգելում են Իրան միջուկային և ռազմական արտադրանքի արտահանումը, օտարերկրյա ներդրումները Իրանի նավթի, գազի և նավթաքիմիական արդյունաբերության մեջ:

մերձեցման և վերջապես ինքնավերարտադրման գործընթացների ուսումնասիրությունը շատ արժեքավոր է՝ որպես ժամանակակից սփյուռքում հայերի գոյատևման առանձնահատուկ փորձ:

Այն կարիք ունի լուրջ գիտական ընդհանրացումների, որոնք կարող են հիմք հանդիսանալ ուրբանիզացված օտարազգի միջավայրում հայերի կենսագործունեությունը հետազոտելու, գնահատելու նրանց համախմբման ներուժը, կանխորոշելու հեռանկարները: Նշված հարցերը բացի գիտականից ունեն նաև լուրջ գործնական նշանակություն, որը առաջնահերթ է, և՛ սփյուռքի, և՛ Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական ընտրանու համար: Հիմնահարցի կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ օտարազգի միջավայրում հայերի ինքնակազմակերպման փորձը այսօր ուսումնասիրվում է տարբեր երկրների (այդ թվում՝ մեր հարևան երկրների) հատուկ կառույցների կողմից: Այս առումով անհրաժեշտ է ստանալ գիտելիքների այնպիսի համակարգ, որի կիրառումը թույլ կտա ազգի ցրիվ վիճակի ավանդաբար դիտարկվող թերությունները դարձնել առավելություն:

Այսպիսով սփյուռքի յուրաքանչյուր հատվածի իրավիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը և վերլուծումը, հնարավորություն կընձեռի եղած ներուժի ոչ միայն փաստագրմանը, այլ նաև հիմք կծառայի նրա համայնքային և համազգային ծրագրերի մշակման և իրականացման հնարավորությունների բացահայտման և գնահատման համար:

Սփյուռքի ներուժի բացահայտման, ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցումները: Վերոնշված գերխնդրի լուծման համար հիմք կարող է հանդիսանալ ճշգրիտ ու համակարգված գիտելիքը, որը կձևավորվի մշտապես համալրվող և գիտականորեն համակարգված տեղեկատվության շնորհիվ: Անհրաժեշտ է, որ այն պարունակի ազգի ներուժի նպատակադրված որոնման, բացահայտման, ամրագրման ուղվածություն, որը կպարունակի ընդհանուր և առանձին հատվածների հնարավորությունների գնահատականը, նպատակադրման, համախմբման և ներդրման ուղիները: Գլխավոր տեսլականը հիմնվում է այն փաստի վրա, որ ներկա իրավիճակով հայ էթնոսը իրեն քաղաքական, տնտեսական հոգևոր նվաճումները կարող է ապահովվել, սփյուռքի տարբեր տարածական, սոցիալական, քաղաքական, տեխնոլոգիական, տնտեսվարող խմբերի բազմաբնույթ համագործակցության շնորհիվ, ըստ երևույթի սոցիոցանցային մեթոդաբանությամբ:

Դա ենթադրում է սփյուռքի գիտական, տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալ-մշակութային և ժողովրդագրական ներուժի մասին տեղեկատվության հավաքագրումով դրա ռեսուրսային վերլուծության շնորհիվ: Դա հնարավորություն կտա հիմնարար համայնքային և համազգային քաղաքականության մշակմանը և իրականացմանը, որի բաղկացուցիչ մասը կկազմի գնահատման և ներառման շրջանակների ձևակերպումը, համայնքային և համազգային գործընթացների կանխատեսման և լուծման ուղիների որոնումը: Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ էթնիկ ընդհանրության ռեսուրսային վերլուծության էությանը, պարունակվող խնդիրների քննարկմանը և իրականացման հաջորդականությանը:

Էթնիկ ընդհանրության ռեսուրսային վերլուծությունը և նրա արդյունքների ներառման ալգորիթմը ենթադրում է ազգի սփյուռքյան հատվածի շահերի պաշտպանման հնարավորությունների և դրա համար անհրաժեշտ համագործության հաջորդաբար գնահատականներ: Հասկանալի է, որ այս տրամաբանության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում

եզրույթների բնորոշումների ճշգրտման և գործառնական խնդիրների պարզաբանման, փոփոխականների պարզաբանման, ցուցակագրման և դասակարգման հարցադրումը, կարևորվող հատկանիշների և վերլուծության մեթոդաբանության առաջարկումը:

Նշվածը առաջին հերթին վերաբերվում է այնպիսի հասկացությանը ինչպիսին է էթնոսոցիալ ռեսուրս եզրույթը: Վերջինս էթնիկ խմբի (ողջ և առանձին հատվածների) այն հնարավորություններն են, որոնք գործունեության ընթացքում ուղված են նրա ինքնավերարտադրման և զարգացման, ու այդ նպատակին հասնելու պայմանների ստեղծմանը: Այս իմաստով «էթնոսոցիալ ռեսուրս» եզրույթը ձեռք է բերում գործոնի բնույթ, որի ներմուծումը էթնիկ խմբի ռեսուրսային վերլուծության կոնտեքստ, թույլ է տալիս մշակել նրա չափագրվող որակական և քանակական բնույթի հատկանիշների ճանաչումը, առանձնացումը, դասակարգումը և անցումը դեպի նախագծային մակարդակ[1]: Որպես գործոն կարող են հանդիսանալ մի կողմից էթնիկ հանրության կոնկրետ բնութագրերը (այսպես օրինակ՝ սեռատարիքային կազմը, խմբի անդամների կարծիքները, պատկերացումները և այլ), մյուս կողմից՝ գնահատման չափելի համակարգը: Այսպիսով էթնիկ հանրության ինչպես նաև նրա առնձին մասերի ներուժի գործոնային վերլուծականում կարող են համակցվել մեթոդաբանական երկու մոտեցում՝ փաստագրական (նկարագրական) և գնահատողական:

Առաջին՝ փաստագրական, մոտեցումն ենթադրում է էթնիկ հանրության ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային և այլ բնույթի հատկանիշների առանձնացումը, նկարագրումը և չափագրումը Պատկերացվում է, որ այս հատկանիշների համակցության ներառումը կապահովի ուսումնասիրության համալիր վերլուծական հենքի կառուցումը, թույլ կտա օգտագործել տնտեսագիտական, ժողովրդագրական, սոցիոլոգիական և այլ բնագավառների կիզակետերում մշակած մեթոդաբանությունը և գործիքակազմը:

Գործոնային վերլուծության ընթացքում կարելի է ներգրավել փոփոխականների բավականին լայն շրջանակ: Այսպես, ռեսուրսային վերլուծության մեջ ընդգրկվող ժողովրդագրական ցուցիչները, որոնք ներառում են էթնիկ խմբի տարաբնակեցման, վերարտադրման, շարժունության և այլ տվյալները, անբաժանելի են սոցիալական ցուցիչներից: Վերջինները բովանդակում են խմբի ներսում փոխկապակցվածությունների և փոխհարաբերությունների կառուցվածքը, գիտելիքներին (ազգային) հաղորդակցմանը օժանդակող ինստիտուտները, ինքնակառավարման մարմինները, որոնք հնարավորություն են տալիս օգտագործել իշխանության քաղաքական ուժը՝ պաշտպանելու խմբի և նրա անդամների ազգային, տնտեսական, իրավական և այլ շահերը: Հարկ է նշել, որ էթնիկ հանրության ժողովրդագրական և սոցիալական հատկանիշները անբաժանելի (համակցված) և սերտորեն կապված են տնտեսական, և մշակութային հատկանիշների հետ: Եթե առաջինը արտացոլում է տնտեսավարման գործունեության կառուցվածքը ու կազմակերպման ձևերը և բազմաթիվ այլ տեսակի որակավորումներ, ապա երկրորդը իր մեջ պարունակում է այնպիսի բնութագրեր, որոնք ապահովում են տվյալ հանրությանը (խմբին) կամ առանձնանալու, կամ էլ ինտեգրվելու շրջապատին իր առանձնահատուկ մշակութային և սոցիոնորմատիվ հենքով: Համաձայն

[1] Նկատի է առնվում համայնքային և համազգային խնդիրների լուծմանը ուղված նախագծեր:

վերոշարադրածի էթնիկ հանրության գործոնային վերլուծության պիտանի ժողովրդագրական, սոցիալական և մշակութային ցուցանիշները անհրաժեշտ է գնահատել որպես ժամանակակից սփյուռքերի համակարված ուսումնասիրման կարևորագույն հիմքերից մեկը:

Երկրորդ, երևույթի կամ գործընթացի գնահատման մոտեցումն է: Այն ենթադրում է չափագրմանը ենթարկվող գնահատականների համակարգի մշակումները, որոնք կամ տիպաբանորեն նմանարկվում, կամ տարբերվում են ուսումնասիրվող խմբի կազմով և կենսագործունեության պայմաններով: Սրա օգնությամբ դիտարկվում են կոնկրետ էթնիկ հանրության այն գործունեությունը, որը ուղղված է նրա վերարտադրման և զարգացմանը համազգային, տարածաշրջանային և լոկալ փոխկապակցվածությունների համատեքստում: Վերոնշված քաղաքների համայնքայն փորձագետների հարցազրույցների ընթացքում արձանագրվեցին բավականին ստվար նյութ, որը գնահատականների բազմակի սյուժեներ էին պարունակում: Դրանց բովանդակային տիպաբանումը ցույց տվեց սփյուռքի, ամեն մի ուսումնասիրված գաղթօջախում բնակվող հայերի մոտ ձևավորված բավականին բովանդակալից կարծիք-քննարկումներ հայրենիքի, ղարաբաղյան պատերազմի, Հայաստանի խնդիրների, քաղաքական անցուդարձի և այլ բազմաթիվ հարցերի շուրջ արտահայտած վերաբերմունք, բացասական կամ դրական գնահատականներ, բարելավման առաջարկներ և այլ:

Այս, երկրորդ մոտեցումը թույլ է տալիս ռեսուրսային վերլուծության ընդհանուր հայեցակետին համնթաց հաշվի առնել նաև առամձնահատկության հայեցակետերը, որոնք պայմանավորված են խմբի էթնոսոցիալ կազմով և կենսագործունեության պայմաններով: Պատկերացվում է, որ այս երկու հայեցակետերը կարելի է համատեղել հատկանիշների դիխոտոմիկ կտրվածքում, երկաթե հակադրության համատեքստում, որտեղ ներմուծվում են երկու բևեռային և նրանց հարակից արժեքները: Այդ հակադրությունների կազմում կարող են մտնեն այնպիսին, ինչպիսին են «արդյունավետ-անարդյունավետ», «ներգրավված - պոտենցիալ», «համալրող - չհամալրվող», «ակտիվ - պասիվ», «խոստումնալից - անհեռանկարային», «հիմնական ածանցյալ». և այլ նման բազմաթիվ ձևակերպումներ: Դրանք կարելի է օգտագործել ռեսուրսային վերլուծության հետագա խնդիրների լուծման համար - ձևայնացման և վերջապես մոդելավորման համար: Վիրջինի կառուցումը ներառում է հասկացությունների ձևակերպում և այնպիսի տերմինների ներմուծում, ինչպիսիք են «պոտենցիալ», «հարաբերակցության ինդեքս», «ժամանակային շարք». մի խոսքով, այն ամենը, ինչը թույլ է տալիս բացահայտել ստացված տվյալների վերլուծական ռեսուրսը:

«Էթնոսոցիալական ռեսուրսներ» հասկացության ըմբռնման վերը նշված սկզբունքները և դրանց ճանաչման, ամրագրման և գնահատման մեթոդները ռեսուրսների վերլուծության մեկնարկային կետն են: Սա պահանջում է էթնիկ համայնքի ներուժի ուսումնասիրման կարևոր դիտակետերի հիմնավորում, հետազոտական հնարքների բացահայտում, ցուցանիշների ամրագրում, ի վերջո, վերլուծում և ձևավորում ռեսուրսների դինամիկ մոդել, որոնք հասանելի են էթնիկ համայնքի կամ ռեսուրսների խմբի ինքնավերարտադրման և զարգացման համար, և դրանց նպատակային օգտագործման հեռանկարները:

Եզրակացություն: Այսպիսով հայկական սփյուռքի ներկա կարողությունների բացահայտման և ներառնման համար, անհրաժեշտ է ապահովել երկու իրար լրացնող մոտեցում:

Առաջինը՝ ազգի ամեն մի հատվածի վերաբերյալ ունենալ այնպիսի ճշգրիտ տեղեկատվություն, որը բավարարի համակարգված հետազոտության ծրագրային պահանջներին: Իրավիճակային նախնական վերլուծությունը թույլ կտա ապահովել ծրագրային խնդիրների խորությունը, որը կբավարարի միջին տեսության մակարդակի պահանջներին և կարձագանքի հասարարական շահերին համահունչ կիռարական ելքերը: Ելակետային այս դրույթը թույլ է տալիս մշակել նպատակների և հարցադրումների շարք, որը կոչված է գտնել ընդհանրացնող տիպաբանական երևույթներ և ընթացք, ինչպես նաև բացահայտել ամեն մի գաղթօջախի առանձնահատկությունները:

Առաջարկելով ծրագրային դրույթների նորովի մեկնաբանություն՝ հարց է դրվում ելնել ներկայիս հայ սփյուռքի նկարագրի ներկ դինամիկայից, որը արագ փոփոխվող իրավիճակներում փոխակերպվում է հոծ զանգվածներից դիսպերս քաղաքաբնակ զանգվածի: Նման դիսպերս տարաբնակեցման իրավիճակում ազգապահպան գործընթացը կարելի է իրականացնել եղած ներուժի համախմբման միջոցով: Տրամաբանական է հետազոտական նպատակները ձևակերպել հիմնվելով ազգի ընդհանուր և նրա տարբեր հատվածների ներուժի բացահայտման և ներառման գաղափարին, որի համատեքստում առանձին երանգ է ստանում «էթնոսոցիալ ռեսուրս» եզրույթը: Վերջինիս հիմնավորումը և ստորոգման ընթացքը կանխորոշում է հետազոտական խնդիրների առաջքաշման տրամաբանությունը, որը հենվում է դինամիկ խորապատկերի վրա ոչ միայն նկարագրել երևույթը, այլ նաև օգտագործել գնահատականների համակարգ, որի միջոցով դուրս գալ դեմի մոդելավորման և նախագծերի պատրաստման ասպարեզ:

Գրականության ցանկ

Կարապետյան Ռ. 2018, Հայ համայնքները այսօր, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., էջ 252:

Կարապետյան Ռ. 2013, Միգրացիան և հայկական նոր սփյուռքը, Երևան, «Գիտություն» հրատ., էջ 212:

Հայ էթնիկությունը սփյուռքում 2021, խմբ. Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս., Ներսիսյան Ս., Տանաջյան Լ., Խաչատուրյան Ն., Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., էջ 460:

Տագէսեան Ա. 2015, Լիբանանի հայօճախը. գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920 – 2005), Հայկազյան համալսարանի հրատ., Բեյրութ, էջ 174:

Российские армяне. Этносоциологическое исследование, 2016, ред. Арутюнян Ю.В., Карапетян Р.С., Остапенко Л.В., Ереван, Изд. «Гитутюн», с. 306.

Arnaud A.-J. 1998, Entre Modernite et Modernisation, P., p. 185.

Cohen R. 1996, Diasporas and the Nation-State: From Victims to Challengers, International Affairs. – Vol. 72, №3, pp. 517-518.

Karapetyan R. 2022, Sociodemographic aspect of the resource analysis of the armenian diaspora: methodological approaches, eds. Ruben Karapetyan, Sona Nersisyan, Marta Mezhlumyan, Armenian diaspora in dynamics, Prague, 2022, p 12-36.

Vertovec S. 2005, The Political Importance of Diasporas, https://www.migrationpolicy.org/article/political-importance-diasporas, (19/06/2023):